ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գարիկ Պետրոսյան, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2023 թվականի հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 3-ը

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն «Model Based Monetary Policy Analysis and Forecasting/ Մոդելների վրա հիմնված դրամավարկային քաղաքականության վերլուծություն և կանխատեսում» թեմայով դասընթացին:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի և սեմինարների ժամանակ քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Մակրոտնտեսական կանխատեսման և վերլուծության համակարգերի հիմնական բնութագրերը և անհրաժեշտ հատկանիշները,
- Դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմները,
- Չդիտարկվող փոփոխականների գնահատման համար Կալմանի ֆիլտրի կիրառության առանձնահատկությունները,
- Եռամսյակային կանխատեսման մոդելի բնութագիրը և կառուցվածքը,
- Մոդելի կալիբրացման մեթոդները և առանձնահատկությունները,
- Դրամավարկային քաղաքականության հիմնական ռեժիմները և դրանց դեպքում մոդելում կատարվող փոփոխությունների անհրաժեշտությունը,

- Հարկաբյուջետային քաղաքականության մոդելավորումը կիսակառուցվածքային մոդելներում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ծրագիրը նախատեսում էր նաև մի շարք գործնական աշխատանքի փուլեր, որոնք ուղեկցվում էին շնորհանդեսների պատրաստմամբ, ներկայացմամբ և արդյունքների քննարկմամբ: Դասընթացի վերջում ներկայացվել է ամփոփ շնորհանդես մոդելի կիրառության հնարավորությունները ներկայացնելու և քննարկելու նպատակով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Գարիկ Պետրոսյան

08 նոյեմբերի 2023թ.